ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 16-21-Ը ԲԵԼԳԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ (Ք. ԲՐՅՈՒՍԵԼ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Նունուֆար Ստեփանյան, ՀՀ ՏԿԵՆ արտաքին կապերի վարչության միջազգային համագործակցության բաժնի պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները

Բելգիայի Թագավորություն (ք. Բրյուսել), 2026թ. փետրվարի 16-21

3. Հրավիրող կողմը

«Կոնրադ Ադենաուեր հիմնադրամ»

4. Գործուղման նպատակը

Մասնակցություն «Opportunities and prospects of Armenia's rapprochement with the EU» թեմայով ուսումնական այցին: ՀՀ պատվիրակությունը բաղկացած էր 11 հոգուց /6-ը՝ ՀՀ գերատեսչություններից (ՀՀ վարչապետի աշխատակազմ, ՏԿԵՆ, Էկոնոմիկայի նախարարություն, Արդարադատության նախարարություն, 2 մասնակից՝ ԱԳՆ), 1-ը՝ Կովկասի ինստիտուտից, Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի /KAS/ Հարավային Կովկասի քաղաքական հարցերով տնօրեն Յակոբ Վոլենշտայնը, KAS հայաստանյան ծրագրերի համակարգող Լիանա Մարուքյանը և 2 թարգմանիչ/:

5. Քննարկված թեմաները

Այցի շրջանակներում քննարկվել են ՀՀ-ԵՄ հարաբերությունները, ԵՄ ընդլայնման գործընթացները, կապակցվածության օրակարգը, Հարավային Կովկասի տարածաշրջանում և Հայաստանում քաղաքական զարգացումները և այլն:

Քննարկված թեմաներն առավել մանրամասն ներկայացված են կետ 6-ի ներքո:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Օր 1

Հանդիպում ենք ունեցել Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի /KAS/ Եվրոպայի գրասենյակի տնօրեն Բեատրիս Գորավանտչիի և KAS բազմակողմ զարգացման քաղաքական երկխոսության հարցերով տնօրեն Օլաֆ Վիենցիկի հետ: Վերջիններիս

կողմից ներկայացվեց KAS-ի գործունեության հիմնական ուղղությունները, և որ իրենց խնդիրն է կամրջել ՀՀ-ին ԵՄ և այլ գործընկերների հետ:

Կարևորեցին համագործակցության խորացումը և, մասնավորապես, Բենելյուքսի երկրների հետ համագործակցության խորացումը: Նշվեց նաև, որ անվտանգային քաղաքականությունը KAS-ի հիմնական ուղղություններից է:

Անդրադարձ կատարելով ԵՄ ընդլայնման գործընթացներին՝ նշվեց, որ ԵՄ ընդլայնումն այս պահին ևս շարունակվում է, և որ Մոնտենեգրոն և Ալբանիան ընդլայնման գործընթացներով պայմանավորված քաղաքականության մեջ ահագին առաջընթաց են գրանցել:

KAS ներկայացուցիչները կարևորեցին 2025թ. ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Եվրոպական միությանը ՀՀ անդամակցելու գործընթացի մեկնարկի մասին» օրենքը և 2026թ. մայիսին Երևանում կայանալիք Եվրոպական քաղաքական համայնքի 8-րդ գագաթաժողովի անցկացումը:

Համաձայն KAS-ի դիտարկումների՝ ՀՀ-ն բարձր առաջնահերթություն ունի ԵՄ համար և այդ համատեքստում Վրաստանում տեղի ունեցածը որոշ մտահոգություններ է առաջացնում: Եվրոպական գործընկերների համար ՀՀ կառավարության դիրքորոշումը հստակ է, ինչը չեն կարող ասել ընդդիմության մասին: ԵՄ-ն կարիք ունի նոր գործընկերների՝ ԵՄ դիմակայունությունը բարձրացնելու համար:

Օր 2

Այցելություն ԵՄ-ում ՀՀ ներկայացուցչություն

Դեսպան Բալայանը ներկայացրեց ՀՀ-ԵՄ ռազմավարական գործընկերության օրակարգը, դրա իրագործման մեխանիզմները, սպասվող բարձրաստիճան գագաթնաժողովների ուղղությամբ իրականացվող աշխատանքները, գործընկերության ընդլայնման հնարավորությունները, ՀՀ-ԵՄ կապակցվածության օրակարգը, 2025թ. ձեռքբերումները /ԵՄ քաղաքացիական առաքելության կարևորությունը, վիզաների ազատականացման ուղղությամբ իրականացվող աշխատանքը, Եվրոպական խաղաղության գործիքակազմի (EPF) մանդատի երկարացումը, 2025թ. դեկտեմբերի 2-ին ստորագրված «ՀՀ-ԵՄ գործընկերության ռազմավարական օրակարգ» փաստաթուղթը և այլն/:

Դեսպանի կողմից անդրադարձ կատարվեց նաև տարածաշրջանային զարգացումներին, հիբրիդային սպառնալիքների դեմ պայքարին, 2024թ. հաստատված «Դիմակայունության և աճի պլան»-ին և այլն:

Այցելություն Եվրոպական ուսումնասիրությունների Wilfried Martens կենտրոն (WMCES)

Հանդիպել ենք WMCES քաղաքականության հարցերով տնօրեն Փիթեր Հեֆելին և WMCES հետազոտող Թեոնա Լավրելաշվիլիի հետ:

Առաջարկեցին ԵՄ ընդլայնման գործընթացներում երկրի դիրքավորման համար օգտագործել սփյուռքի ներուժը:

Քննարկումների ժամանակ անդրադարձ կատարվեց վիզաների ազատականացմանը, տնտեսական օգուտներին: Միտք հայտնեցին, որ ԵՄ-ի համար ՀՀ-ն միակ երկիրն է տարածաշրջանում, որտեղ ԵՄ-ն կարող է տարածել ժողովրդավարական արժեքները: Վերջիններիս հետաքրքրում էր նաև 2026թ. հունիսին Հայաստանում կայանալիք ընտրությունները:

Օր 3

Հանդիպում ենք ունեցել ***KAS Եվրոպայի գրասենյակի՝ Հարավային Կովկասի և Վրաստանի ճգնաժամի հարցերով ներկայացուցիչներ Փիթեր Սվեդբերգի և Օկկե Բոումանի հետ:*** Վերջիններս անդրադարձան կապակցվածության օրակարգին, բաց սահմանների դեպքում հնարավոր զարգացումներին և այլն:

Հանդիպում ԵՄ գործընկերության և արևելյան հարևանության գլխավոր տնօրինության ներկայացուցիչներ Իզաբելա Ռիչարդի, Դերեն Դերյայի հետ: Նախ անդրադարձան ԵՄ ընդլայնման և արևելյան հարևանության հարցերով գլխավոր տնօրեն Խերտ Յան Կոպմանի գլխավորած պատվիրակության՝ ՀՀ այցի արդյունքներին /տրանսպորտ, էներգետիկա, երկաթուղի/, ինչպես նաև Երևանում կայանալիք Եվրոպական գագաթաժողովին, ինչը լավագույնս կօգնի կենտրոնացնել համագործակցային ջանքերը նաև կապակցվածության օրակարգի շրջանակներում: Նշեցին, որ ԵՄ համար կարևոր է ներառական կապակցվածության օրակարգը և դրանում մասնավոր հատվածի ներգրավվածությունն ու ներդրումները: Անդրադարձան այս տարի ՀՀ-ում կայանալիք ընտրություններին, CEPA-ին՝ որպես ՀՀ-ԵՄ համագործակցության հիմնաքար: Նշվեց, որ 2025թ. դեկտեմբերին ստորագրված Ռազմավարական համագործակցության փաստաթուղթը իրենից ներկայացնում է կարճաժամկետ և միջնաժամկետ

նպատակների փաստաթուղթ, որը չի փոխարինում CEPA-ին: Անդրադարձ կատարեցին ռուսական նարատիվներին՝ ավանդական եվրոպական արժեքների մասով:

Հանդիպում ԵՄ պառլամենտի պատգամավոր Դ. ՄաքԱլլիստերրի արտաքին քաղաքական հարցերով խորհրդական Ֆրանկ Մարտինի և ԵՄ պառլամենտի պատգամավոր Միրիամ Լեքսմանի գրասենյակի ղեկավար Զիգա Ֆակտորի հետ:

Վերջիններիս նույնպես հետաքրքրում էր Վրաստանի դեպքը /case/՝ Եվրաինտեգրման գործընթացի շրջանակներում, առաջիկա ընտրությունները և դրանց վրա ՌԴ հնարավոր ազդեցությունը:

Օր 4

Շրջայց Եվրոպական պառլամենտի շենքում

Հանդիպում European Committee of the Regions-ի ներկայացուցիչ Մարինկո Ռաոսի և European Committee of the Regions-ի այլընտրանքային անդամ Մարիա Հարությունյանի հետ:

Վերջիններիս կողմից ներկայացվեց իրենց գործունեության ոլորտները: Իմ կողմից անդրադարձ կատարվեց 2025թ. հոկտեմբերին Երևանում կայացած Արևելյան գործընկերության տարածաշրջանային և տեղական իշխանությունների համաժողովի (CORLEAP) 14-րդ տարեկան նիստին:

Օր 5

Այցելություն Եվրոպական պատմության տուն-թանգարան

<u>7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը</u>

Միջոցառման ձևաչափով պայմանավորված՝ որոշումներ չեն ընդունվել և այլ փաստաթղթեր չեն ստորագրվել:

<u>8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները</u>

Խրախուսել պետական համակարգի աշխատակիցներին նմանատիպ դասընթացներին մասնակցությունը՝ հաշվի առնելով ՀՀ-ԵՄ զարգացող օրակարգը և CEPA-ի շրջանակներում նոր ճանապարհային քարտեզը:

<u>9. Ստորագրությունը, ամսաթիվը</u>

Նունուֆար Ստեփանյան 27.02.2026թ.